# ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ընդունված է ԽՍՀՄ ՀԺԿ յեվ հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ-ի կողմից 1934 թ. փետրվարի 17-ին

ՍԱՅՈՒԶՈՐԳՈՒՉՈՏ 1937

3 0 JAN 2018

338.1 : 338.1Հ.

# ՕՐԻՆԱԿԵԼԻ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ընդունված է ԽՍՀՄ ՀԺԿ-ն յեվ հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ-ի կողմից 1934 թ. փետրվարի 17-ին

ՍԱՅՈՒԶՈՐԳՈՒՉՈՏ 1937 թ.

## ՑՈՒՑԱԿ

ՄՏԿ-ի կողմից կատարվելիք աշխատանքների

| №№ | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Ծավալը | Կատարման ժամկետը | Վորակը | Ծանոթու-թյուն |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |



սպասարկելով կոլտնտեսությանը ագրոնոմիական սպասարկումով, կազմելով նրա արտադրական ֆինանսական պլանները, սահմանելով ճիշտ ցանքաշրջանառություն, ոժանդակելով յեկամտի բաշխման գործում, պատրաստելով կոլտնտեսային կադրեր և կազմակերպելով հաշվառումը։

4. Դաշտային բոլոր աշխատանքներն առանց բացառության, այդ թվում նաև տրակտորների վրա կատարվող աշխատանքները, կատարում են իրենք կոլտնտեսականները մեքենա-տրակտորային կայանի կողմից սահմանված և կոլտնտեսության հետ համաձայնեցրած կարգով։

Կոլտնտեսությունը պարտավորվում է վառելանյութը և մեքենաները յերկաթուղու կայարաններից աշխատանքի վայրը փոխադրել և տրակտորների աշխատանքի վայրը ջուր տեղափոխել։

5. Բերքատվության և տնտեսության յեկամուտի բարձրացման նպատակով, կոլտնտեսությունը պարտավորվում է կիրառել Շրջգործկոմի կողմից սահմանված ագրոնոմիական կանոնները և ըստ ՄՏԿ ի պահանջի կիրառել բոլոր ուրիշ անհրաժեշտ ագրոկուլտուր բարելավումներ իր դաշտերում անցկացնելով Շրջգործկոմի կողմից հաստատված ցանքաշրջանառությունը.

6. Կոլտնտեսությունը պարտավորվում է միջոցներ ձեռք առնել ինչպես հանրայնացրած անասունների, նույնպես և մասամբ կոլտնտեսականների անասունների գոմաղբային պարարտանյութերի կուտակմանը, կանոնավոր և խնայողաբար պահպանել գոմաղբը և դաշտ դուրս բերել ՄՏԿ-ի կազմած պլանի համաձայն։

7. Հացահատիկի դիզումն ու կալսումը կայանի ցուցմունքով կատարվում է վորոշ տեղերում։ ՄՏԿ-ի կատարած աշխատանքների համար հասանելիք մթերքի փոխադրումը յերկաթուղու կայարանները, նավահանգիստները, ելևատորները և գործարանները կատարվում է կոլտնտեսության փոխադրական միջոցներով կոլտնտեսության հաշվին։

8. Կոլտնտեսությանը պատկանող գյուղատնտեսական բարդ մեքենաներն ավելի բարձր արտադրողականությամբ օգտագործելու նպատակով ՄՏԿ-ն կոլտնտեսությունից հատուկ համաձայնությամբ գնում է բոլոր բարդ կալսիչներն ու լոկոմոբիլները։

9. Կոլտնտեսության համար ՄՏԿ-ի կատարած յուրաքանչյուր աշխատանքն ավարտելուց հետո, ՄՏԿ-ն պետք է հանձնի, իսկ կոլտնտեսությունը ընդունի այդ աշխատանքը ՄՏԿ-ի դիրեկտորի կողմից և կոլտնտեսության վարչության նախագահի կողմից ստորագրված ակտով։ Ակտում պետք է ճիշտ ցույց տրվի աշխատանքների քանակը, վորակը և կատարման ժամկետները։

10. Կոլտնտեսությունների համար ՄՏԿ-ի կատարած գյուղատնտեսական աշխատանքները վարձատրվում են բնամթերքով յելնելով նրանց բերքատվությունից հետևյալ չափերով։

(Աղյուսակները հաջորդ էջերում)



## ՄՏԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ.

**1. Հացահատիկային կուլտուրաների յեվ արևածաղկի համար** *(կիլոգրամներով)*

| №№ ըստ կարգի | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Բերքը մեկ հեկտարից (ցենտներով) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3-ից պակաս | 3-ից 5 | 5-ից 7 | 7-ից 9 | 9-ից 11 | 11-ից 13 | 13 և ավելի |
| 1 | Վար և ցել | 10 | 25 | 55 | 80 | 100 | 120 | 145 |
| 2 | Ցրտահերկ | 9 | 22 | 48 | 70 | 90 | 108 | 130 |
| 3 | Ցանքս | 2 | 5 | 10 | 15 | 19 | 24 | 29 |
| 4 | Հունձ | 4 | 10 | 21 | 30 | 40 | 48 | 58 |
| 5 | Կալսում | ՄՏԿայանի կալսիչներով կալսված հացահատիկի 8 տոկոսը | | | | | | |
| 6 | Փոցխել մի հետք | 0,5 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7 | Դիսկում և կուլտիվացիա | 1 | 2,5 | 5 | 7,5 | 9,5 | 12 | 14,5 |
| 8 | Վար աշնանացանի համար և ցելի կրկնահերկ | 6 | 15 | 30 | 45 | 57 | 72 | 87 |
| 9 | Խոզանի յերեսվար | 2 | 5 | 10 | 15 | 19 | 24 | 29 |
| 10 | Բերքահավաք կոմբայններով | Կոմբայններով կալսված հացահատիկի 11 տոկոսը | | | | | | |
| 11 | Յեգիպտացորենի բերքահավաքը պիկկերներով | Պիկկերներով հավաքած յեգիպտացորենի 4 տոկոսը | | | | | | |
| 12 | Եգիպտացորենի բերքահավաքը պիկկերներով և յեգիպտացորենի կալսումը կալսիչներով | ՄՏԿ-ի կալսիչներով կալսված հացահատիկի 11 տոկոսը | | | | | | |
| 13 | Գյուղատնտեսական հիմնական աշխատանքների (վար, ցանք, բերքահավաք և կալսում) ամբողջ կոմպլեքսի կատարման համար | 13 | 30 | 60 | 90 | 120 | 150 | 190 |
| | | և ՄՏԿի կալսիչներով կալսված հացահատիկի 8 տոկոս | | | | | | |
| 14 | Վար բուկկերով | 5 | 12 | 24 | 35 | 44 | 56 | 66 |
| 15 | Ցանք բուկկերով | 2 | 5 | 10 | 15 | 19 | 24 | 29 |
| 16 | Վար ու ցանք բուկկերով | 7 | 17 | 34 | 50 | 63 | 80 | 95 |

**Ծանոթություն.**—Որինակելի պայմանագրի լրացումները բրնձի և յեգիպտացորենի նկատմամբ, նայիր ԺԿԽ-ի Մթերման Կ միտեյի 1935 թ. 10/7-ի № 268 վորոշումը և ՍՍՀՄ-ի ՀԺԿ-ի ու ԺԿԽ-ի Մթերման Կոմիտեյի 1935 թ. 16/8-ի № 108/220—1609 պարզաբանումը։

## 2. Բամբակի համար (հնդավորը—сырец կիլոգրամներով)

| № ըստ կ. | Աշխատանքների անունը | Ընդհանուր [illegible] | Բնավճարի դրույքները մի հեկտար ջրովի բամբակի համար (հնդավորը կիլոգրամներով) հետևյալ բերքի դեպքում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մինչև 6 ցենտներ մեկ հեկտարից | | 6-ից բարձր մինչև 10 ցենտ. մեկ հեկտ. | | 10-ից բարձր մինչև 15 ցե մեկ հեկտ-ից | | 15 ցենտներից բարձր մեկ հեկտ-ից | |
| | | | Միջին Ասիա | ԱՍՖԽՀ | Միջին Ասիա | ԱՍՖԽՀ | Միջին Ասիա | ԱՍՖԽՀ | Միջին Ասիա | ԱՍՖԽՀ |
| 1 | Ցրտահերկ | 10 | 40 | 30 | 60 | 45 | 90 | 68 | 110 | 82 |
| 2 | Գարնան վար առաջին | 9 | 40 | 30 | 60 | 45 | 90 | 68 | 110 | 82 |
| 3 | Գարնան վար հաջորդ | — | 36 | 27 | 54 | 40 | 80 | 60 | 100 | 75 |
| 4 | Փոցխել մեկ հետք | — | 0,4 | 0,3 | 0,6 | 0,4 | 0,9 | 0,7 | 1,0 | 0,75 |
| 5 | Դրակում | — | 13 | 9 | 20 | 15 | 30 | 22 | 40 | 30 |
| 6 | Ցանք | 1 | 4 | 3 | 6 | 4,5 | 9 | 6,5 | 11 | 7,5 |
| 7 | Կուլտիվացիա մեկ անգամ | 1 | 4 | 3 | 6 | 4,5 | 9 | 6,5 | 11 | 7,5 |
| 8 | Բերքահավաք բամբակ հավաքող պնևմատիկ մեքենաներով | | Միջին Ասիայի համար 6 տոկոս, ԱՍՖԽՀ-ի և Նոր շրջանների համար 4,5 տոկոս հավաքած բամբակի քանակից | | | | | | | |
| 9 | Բերքահավաք ... | | Միջին Ասիայի համար՝ 2 տոկոս, ԱՍՖԽՀ-ի և Նոր շրջանների համար՝ 1,5 տոկոս հավաքած բամբակի քանակից | | | | | | | |
| 10 | Բամբակի ... | | Միջին Ասիայի համար՝ 2 տոկոս, ԱՍՖԽՀ-ի և Նոր շրջանների համար՝ 1,5 տոկոս հավաքած բամբակի քանակից | | | | | | | |
| 11 | Ամբողջ կոմպլեքսի համար (2 վար, փոցխել, ցանքս, 2 կուլտիվացիա և բերքահավաք) | 20 | 80 | 60 | 120 | 90 | 180 | 185 | 220 | 160 |

Ծանոթություն.—Բամբակի դրույքների լրացումների մասին նայիր ԽՍՀՄ ԺԿԽ և ԺԿԽ-ի Միջնական կոմիտեի 1935 թ. 28/X և 14/V 1936 թ. վորոշումները։

## 3. Ճակնդեղի համար (կիլոգրամներով)

| | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Բերքը մեկ հեկտարից (ցենտներով) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 80-ից պակաս | 80 և 100-ից պակաս | 100 և 120-ից պակաս | 120 և բարձր |
| 1 | Խորը վար | 600 | 800 | 1000 | 1200 |
| 2 | Կուլտիվացիա | 60 | 80 | 100 | 120 |
| 3 | Ցանքս | 120 | 160 | 200 | 240 |
| 4 | Փորել | 300 | 400 | 500 | 600 |
| 5 | Գյուղատնտեսական հրահանգի աշխատանքների ամբողջ կոմպլեքսը (վար, ցանքս, կուլտիվացիա և փորել) կատարելու համար | 1020 | 1360 | 1700 | 2040 |
| 6 | Միջշարքային կուլտիվացիա 1-ին | 90 | 120 | 150 | 180 |
| 7 | Փնջավորում | 90 | 120 | 150 | 180 |
| 8 | Փխրեցում | 90 | 120 | 150 | 180 |
| 9 | Խոզանի յերեսավար | 120 | 160 | 200 | 240 |
| 10 | Փոցխել | 30 | 40 | 50 | 60 |

Ծանոթություն.—Շաքարի ճակնդեղի դրույքների կրճատումների մասին, նայիր ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1935 թ. 2-10-ի № 2720 վ որոշումը։

## 4. Վուշի համար (թելով և սերմով—կիլոգրամներով)

| | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Բերքը մեկ հեկտարից (ցենտներով) | | |
|---|---|---|---|---|
| | | 1-ից պակաս | 1 և 2-ից պակաս | 2 և բարձր |
| 1 | Վար առաջին | 5 | 8 | 15 |
| 2 | Վար յերկրորդ | 2 | 5 | 9 |
| 3 | Ցանքս | 1 | 2 | 4 |
| 4 | Քաղում (теребление) | 6 | 10 | 19 |
| 5 | Կալսում մեքենաներով | 1 | 2 | 4 |
| 6 | Գյուղատնտեսական աշխատանքների հիմնական կոմպլեքսը (2 վար, ցանքս և քաղում) կատարելու համար | 12 | 22 | 42 |
| 7 | Փռում մեկ հեկտար | 1 | 2 | 4 |
| 8 | Փոցխում մեկ հեկտար | 0,3 | 0,55 | 1 |
| 9 | Կուլտիվացիա մեկ հեկտար | 0,6 | 1,0 | 1,7 |
| 10 | Խոզանի յերեսավար վուշի համար | 1 | 2 | 4 |

## 5. Գետնախնձորի համար (կիլոգրամներով)

| | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Բերք մեկ հեկտարից (ցենտներով) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 30-ից պակաս | 30 կամ 50-ից պակաս | 50 կամ 70-ից պակաս | 70 կամ 90-ից պակ. | 90 կամ 110-ից պակաս | 110 և ավելի |
| 1 | Վար | 70 | 210 | 385 | 560 | 700 | 860 |
| 2 | Տնկելը | 30 | 90 | 165 | 240 | 300 | 370 |
| 3 | Բերքահավաք | 60 | 180 | 330 | 480 | 600 | 750 |
| 4 | Գյուղատնտեսական հիմնական աշխատանքների ամբողջ կոմպլեքսը (վ. ր. տնկել, բերքահավաք) կատարելու համար | 140 | 440 | 800 | 1200 | 1500 | 1850 |
| 5 | Փոցխում մեկ հետք | 4 | 11 | 20 | 28 | 35 | 43 |
| 6 | Դիսկում | 7 | 21 | 29 | 56 | 70 | 86 |
| 7 | Խոզանի յերեսավար | 14 | 42 | 77 | 112 | 140 | 172 |

## 6. Տզականեփի համար (կիլոգրամներով)

| | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Մեկ հեկտարից բերք ստանալու դեպքում (ցենտ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3-ից պակաս | 3 և 5 ցենտների միջև | 5 և 7 ցենտների միջև | 7 և ավելի |
| 1 | Գարնան վար | 9 | 20 | 36 | 56 |
| 2 | Ցրտահերկ | 8 | 18 | 32 | 50 |
| 3 | Ցանքս | 2 | 4 | 7 | 11 |
| 4 | Դիսկում կամ կուլտիվացիա | 1 | 2 | 3,5 | 5,5 |
| 5 | Փոցխում | 0,5 | 1 | 1,5 | 2,5 |
| 6 | Խոզանի յերեսավար | 2 | 4 | 7 | 11 |

Ծանոթություն.—Գետնախնձորի և տզականեփի գործերի լրացումները տես նույն Հողժողկոմատի և Ժողկոմխորհի Միացյալ Կոմիտեյի 1935 թվի 7/7-ի 3/V և 23/9-ի վորոշումները.



11. Հացահատիկային կուլտուրաների համար կատարած աշխատանքների դիմաց ՄՏԿ-ին հասանելիք հացահատիկը կոլտնտեսությունը հանձնում է ՄՏԿ-ին բոլոր հացահատիկային, ձավարի (крупяными) և լոբազգիների (бобовыми) կուլտուրաներով, կոլտնտեսության յուրաքանչյուր կուլտուրայի ցանքսի տարածության համեմատ։ Արևածաղկի համար կատարած աշխատանքների դիմաց ՄՏԿ-ին հասանելիք արևածաղիկը հանձնվում է ՄՏԿ-ին համաձայն այդ կուլտուրայի համար կատարած աշխատանքների։ Բրնձի, ինչպես և տզականեփի (клещевина) համար ՄՏԿ-ի կատարած աշխատանքների վարձատրությունը բնամթերքով (натурой) կատարվում է միմիայն բրինձով (շալա, չալթուկ) ու տզականեփով և այլ կուլտուրաներով չի կարող փոխարինվել (ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1934թ. ապրիլի 8-ի նո. 785 վորոշումը).

Յեգիպտացորենի համար ՄՏԿ-ի կատարած աշխատանքները նույնպես միմիայն յեգիպտացորենով են վարձատրվում (Խ. Ս. Հ. Մ.—Ժ. Կ. Խ-ի 1934 թ. օգոստոսի 3-ի նո. 1931 և 1934 թ. հոգոստոսի 7-ի № 1863 վորոշումներով)։

Նախնական մշակման գործարանների մոտ գտնվող կոլտնտեսությունները վուշի բնավճարը հանձնում են մանրաթելով (ВОЛОКНОМ) և տրեստայով (тростой) այդ կոլտնտեսության հետ կապված կոնտրակտացիոն պայմանագրի համաձայն, ընդվորում յուրաքանչյուր կիլոգրամ հասանելիք մանրաթելի (ВОЛОКНО) դիմաց հանձնվում է համապատասխան վորակի 6 կլգ. տրեստա։ Մանրաթելը (ВОЛОКНО) կամ տրեստան կոլտնտեսությունը հանձնում է ՄՏԿ-ին բնավճարի կարգով, կոնտրակտացիոն պայմանագրով նախատեսված միջակ համարից վոչ ցածր։

Գյուղատնտեսական հիմնական աշխատանքները, կոմպլեքսային կարգով վարձատրելու համար, ընդունվում են

այն տարածության չափով, որտեղ գյուղատնտեսական հիմնական աշխատանքների ամբողջ կոմպլեքսն է կատարված, թեև տարբեր հողամասերի վրա։ Այդ աշխատանքների մնացած մասը վարձատրվում է, որպես առանձին աշխատանքներ։

12. Կոլտնտեսությունը ըստ բերքատվության չափերի այս կամ այն խմբին դասելը, կատարվում է հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ են մտնում Շրջգործկոմի նախագահը, ՍՍՀՄ ի ԺԿԽ ին կից Մթերման Կոմիտեի շրջանային լիազորը, համապատասխան ՄՏԿ ի դիրեկտորը և համապատասխան կոլտնտեսության նախագահը 12 օրից ոչ ուշ համապատասխան կոլտնտեսությունների բերքահավաքը սկսվելուց հետո։

Վուշ մանրաթելի բերքատվությունը, որոշվում է վուշ—տրեստայի (треста) փռելատեղից հավաքը սկսվելուց 12 օր հետո իսկ թրջելու շրջաններում թրջհորատեղերից հանելու (выгрузка) սկզբից 12 օրից ոչ ուշ։

Շրջանային հանձնաժողովի որոշումները ըստ հացահատիկի, արեվածաղկի, բրինձի, տզակաղնեփի, բերքատվության չափի կոլտնտեսությունը այս կամ այն խմբին դասելը, հանձնաժողովի նախագահի կողմից մտցվում են բերքատվության միջշրջանային պետական հանձնաժողովի քննության ու հաստատմանը։

Վերջինս պարտավոր է կառավարության կողմից սահմանված ժամկետներին քննության առնել շրջանային հանձնաժողովի որոշման նախագիծը և յուրաքանչյուր կոլտնտեսությանը ըստ բերքատվության չափի այս կամ այն խմբի դասելու մասին, հանել յուր վերջնական որոշումը։ Բերքատվության միջշրջանային պետական հանձնաժողովի որոշումը, ՄՏԿ-ի կողմից կոլտնտեսություններում կատարած աշխատանքների համար հաշվառք կատարելու ժամանակ, պարտադիր է թե ՄՏԿ-ի և թե կոլտնտեսությունների համար։



Ղեկավարվելով բերքատվության միջշրջանային պետական հանձնաժողովի որոշումով, կոլտնտեսությունը ըստ բերքատվության չափի այս կամ այն խմբի դասելու մասին, ՄՏԿ-ի դիրեկտորը, կոլտնտեսության նախագահի հետ հաշվում են ՄՏԿ ի կողմից մինչև բերքահավաքի սկսվելը կատարված աշխատանքի համար հասանելիք հացահատիկն և այլ կուլտուրաները։

Մինչև բերքահավաքի սկսվելը ՄՏԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվառքը կատարվում է կալսված հացահատիկի առաջին պարտիաներից և այլ կուլտուրաների հավաքից, բայց համապատասխան կուլտուրաների բերքահավաքի սկզբից մի ամսից ոչ ուշ։

Հասկային կուլտուրաների բերքահավաքի և կալսման, այլ հացահատիկային կուլտուրաների, բամբակի, ճակնդեղի, վուշի, արեվածաղկի, տզակաղնեփի և գետնախնձորի համար հաշվառք կատարվում է յուրաքանչյուր 5 օրը մեկ անգամ այդ աշխատանքները կատարվելուց հետո։

Մնացած կուլտուրաների (բացի հացահատիկային, յեգիպտացորենի, բրնձի, տզակաղնեփի, բամբակի, վուշի, ճակնդեղի, արեվածաղկի, գետնախնձորի, սոյայի, մանանեխի և կանեփի, Արեվմտյան, Կուրսկի, Չերնիգովի մարզերում և Կույբիշեվի յերկրում) նկատմամբ հաշվառքը բնավճարով չի կատարվում, այլ դրամով, ՄՏԿ-ի և կոլտնտեսության հատուկ համաձայնությամբ նախատեսված ժամկետներին և պայմաններով։

Ցելի, աշնանացանի և ցրտահերկի աշխատանքները ՄՏԿ-ն կատարում է կոլտնտեսությանը տրվող անտոկոս վարկի կարգով, հետեվյալ տարվա բերքից բնամթերքով վարձատրվելու պայմանով։

13. ՄՏԿ-ն և կոլտնտեսությունը պարտավոր են խնայողաբար և հոգատար վերաբերվել տրակտորների, ձիերի, գյուղատնտեսական ինվենտարի, սերմերի և ՄՏԿ-ի

Պատճե.
Հավելված ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1936 թ.
I/XII № 2067 վորոշման

# ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐ ՄԹԵՐՈՂ ԿՈՄԻՏԵՏԻ ՅԵՎ ԽՍՀՄ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1936 Թ. ՀՈՒՆՏԵՄԲԵՐԻ 11-Ի № 3730/670

## ՏԱՓԱՆԻ, ՆՈՍՐԱՑՄԱՆ, ԿԵՂԵՎԸ ՓՇՐԵԼՈՒ ՅԵՎ ԽՈԶԱՆԻ ՅԵՐԵՍՎԱՐԻ (ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ) ՄՏԿ-Ի ԲՆԱՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի զարգացումն ԽՍՀՄ ի ԺԿԽ-ի 1935 թ. մարտի 9-ի № 377 վորոշման, (բամբակի համար) ՄՏԿ-ի աշխատանքների համար սահմանել հետեվյալ դրույքները

| ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆԸ | Ընդհանուր դրույքը անջրդի վիճակում մաքուր | Բնավճարի դրույքը մի հեկտար ջրովի բամբակի համար (հնդավորը сырец կիլոգրամներով) հետեվյալ բերքի դեպքում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մինչև 6 ցենտներ մի հեկտարից | | 6-ից մինչև 10 ցենտ. մի հեկտարից | | 10-ից մինչև 15 ցենտ. մի հեկտարից | | 15 ցենտներից բարձր մի հեկտարից | |
| | | Միջին Ասիա | ԱՍՖՍՀ | Միջին Ասիա | ԱՍՖՍՀ | Միջին Ասիա | ԱՍՖՍՀ | Միջին Ասիա | ԱՍՖՍՀ |
| 1. Տափանելը փոցխելով | — | 2,0 | 1,5 | 3,0 | 2,25 | 4,4 | 3,25 | 5,5 | 3,75 |
| 2. Տափանելը (шлейфование) | 0,5 | 1,6 | 1,2 | 2,4 | 1,8 | 3,5 | 2,5 | 4,5 | 5,0 |
| 3. Մեխանիկական նոսրացում | — | 4,0 | 3,0 | 6,0 | 4,5 | 9,0 | 6,5 | 11,0 | 7,5 |
| 4. Կեղևի փշրելը | 0,15 | 0,4 | 0,3 | 0,6 | 0,4 | 0,9 | 0,7 | 1,0 | 0,75 |
| 5. Խոզանի յերեսվար | 2,0 | 8,0 | 6,0 | 12,0 | 9,0 | 18,0 | 13,0 | 22,0 | 15,0 |

ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից գյուղտնտ. մթերքներ մթերող կոմիտեյի նախագահի տեղակալ՝ ՉԼՕՐԻՆ

ԽՍՀՄ-ի հողագործության ժողովրդական [redacted]

26 ЯНВ 1937

36-

11

28118